

Արքայախոնավիչ

Գործարարական

Հասցեական




67  
—  
Ա-16

1935

25 SEP 2008

Հ. ԱՐՐԱՀԱՄՈՎԻԶ

ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ  
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն ՈՒ Մ



67  
Չ-16

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ > ՀԱՅՏՆԱՐԿՈՒՄԻ  
ՅԵՐԵՎԱՆ 1935

— 31 հեղինակ  
Կարգապահ

67  
Ս-16

Հ. ԱՐԱՅԱՄՈՎԻՉ



**ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ  
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն ՈՒՄ**



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԱՐԿՈՈՊԻ  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն . 1935



1300-54

### ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն գրքույկի հեղինակը համառոտ կերպով ավել և գորգազործութեան պատմութիւնը Հայաստանում:

Նախահեղափոխական շրջանում գորգազործութիւնը Հայաստանում չափազանց խղճուկ պատկեր ունէր: Հայաստանի բոլոր շրջաններում ցրված գորգազործներն աշխատում էին ամենաղժվարին պայմաններում բարձր խափի համար: Մակայն Հայաստանի խորհրդայնացումից հետո, շնորհիվ Կոմունիստական կուսակցութեան ձեռք առած ամենակարուկ միջոցների, 1925 թ. սկսած Հայաստանի Տնայնագործական կոոպերացիան համախմբում է հարյուրավոր տնայնագործներին. կազմակերպում և սկզբնական շրջանում փոքրիկ արտելներ Յերեվանում յիվ մի շարք շրջաններում: Ձեռք առած միջոցառումների շնորհիվ, կարճ ժամանակաըթացքում աճում ու զարգանում է գորգազործութիւնը Հայաստանում:

Վերպես կըստորադասին արտադրութիւն, նա շատ շուտով հայտնի յի դառնում արտասահմանյան շուկաներում: Հայկումկուսի Կենտկոմի ամենօրյա ոպերատիվ ղեկավարութեան շնորհիվ վերջին տարիների ընթացքում կազմակերպվում են գորգազործական խոշոր արհեստանոցներ, ինչպես Յերեվանում, նույնպես Կիրովականում, Իջևիվանում, Մտեփանավանում, Ծամշաղինում, Մարտունիում և այլն, վորոնց համար ստեղծվում են ամենայն հարմարութիւններ և վորոնց շնորհիվ այսօր մենք հնարվորութիւն ունենք արտադրելու 11 հազար քառակուսի մետր գորգեր:

Հաշվի առնելով մեր յերկրի բանվորների, կոլտնտեսականների և ստախանովականների աճող պահանջը, այս տարի ներքին շուկայի համար արտադրվելու յեն մեծ ծավալի և խոշոր քանակութեամբ գորգեր:

Գորգազործութեան ասպարիզում մենք ունենք մի շարք լավագույն ստախանովականներ և փորձված մասնագետներ, վորոնք տարիներ շարունակ պայքարել են կուսակազմակերպու-

Պատ. խմբագիր՝ Հ. ԳՍՍՊՍՐՅԱՆ  
Տեխ. խմբագիր և սրբագրիչ՝ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ  
Գլավխտի լիազորի № 249, պատվեր № 22, ակրամ 600  
Հանձնված է արտադրութեան 15 հոկտեմբերի 1935 թ.  
Ստորագրված է տպագրելու 7 նոյեմբերի 1935 թ.  
Հ Ա Յ Տ Ն Ա Ր Կ Ո Ո Պ Ի Տ Պ Ա Ր Ա Ն 1935 Յ Ե Ր Ե Վ Ս Ն

## ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑՅԱԼՈՒՄ

(ՊՍՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԿԻ ԱԿՆԱՐԿ)

Մարդկության նախնական կարևորագույն ստեղծագործություններից մեկն է նաև մանածագործությունը թե՛ բուսական ցողուններից ու ծաղիկներից (կանեփ, կտավհատ, բամբակ) և թե՛ կենդանիների բրդից (վոչխար, ուղտ, այծ):

Յե՛րբ է առաջին անգամ սկիզբ առել այդ արհեստը—մարդկության հայտնի չէ, միայն մի բան է պարզ, վոր նա սկսվել է շատ անհիշելի ժամանակներից, հետագայում միայն գործ է անվել իլիկը (թեշիկ), սանդերքը և ճախարակը, վորոնք մինչև այժմ էլ դեռևս շատ յերկրներում գոյություն ունեն:

Միայն 19-րդ դարի սկզբներին Անգլիայում կարողացել են հնարել թե՛ բուրդ և թե՛ բամբակ գզելու և մանելու մեքենաներ, վորոնք ներկայումս հասցված են զարմանալի կատարելագործության:

Մարդիկ դեռ շատ հին ժամանակներից սովորել են թե՛ բույսերից և թե՛ բրդից թել մանել, իսկ հետագայում աստիճանաբար սկսել են գործել նաև կենցաղային կարիքների համար զանազան հյուսվածքեղեն, ինչպես որինակ՝ պարկ, սփոոց, թաղիք, կարպետ և վերջապես նաև՝ գորգ:

Սկզբնական շրջանում այդ գործվածքներն անկասկած յեղել են մի գույնի կամ բնական տարբեր գույներից, իսկ հետագայում կարողացել են գտնել բրդի ու բամբակի ներկելու միջոցները և սկսել է զարգանալ ներկարարությունը:

Այսպիսով սկիզբ է առել կարպետների և, հետագայում, գորգերի արտադրությունը: Սակայն այն էլ մարդկությանը հայտնի չէ, թե՛ գորգագործությունն առաջին անգամ վորտեղ է ծագել և ինչպես է տարածվել մյուս յերկրները՝ միայն մեզ հայտնի յե, վոր հնում գորգեր արտադրվելիս են յեղել և՛ Յեգիպտոսում և՛ հին Հունաստանում և՛ Ասորեստանում և՛ այլ Արևելյան ու Փոքր Ասիայի յերկրներում և Հայաստանում:

Հունական և հայկական պատմագիրները վկայութեամբ, հին ժամանակներում գորգագործութեամբ գլխավորապէս զբաղվելիս և յեղել այդ ժամանակվա, այսպէս ասած, բարձր դասակարգը և գորգեր գործելու արհեստը յեղել և առանձնապէս հարգել: Գործվածքների մեջ ամենաբարդը, ամենագեղեցիկը և լավագույն գորգերն արտադրվելիս են յեղել թագավորական ու իշխանական պալատներում, վորտեղ առաջնակարգ վարպետուհիները մրցում էյին իրար հետ սեփական արտադրութեանների կատարելագործութեամբ:

Հետագայում, այդ յերկրներում պատմական, քաղաքական անցքերի շնորհիվ, հատկապէս առևտրական կապիտալի առաջացման հետեանքով, գորգեր արտադրելու արհեստը հետզհետե դառնում և աղքատացող մասսաների զբաղմունք:

Մեր որերում գորգագործութեանը վոչ ամեն տեղ արդյու-նաբերական բնույթ ունի: Քիչ թե շատ ունեւոր տնտեսութեանը գորգեր և նման իրեր արտադրում և վոչ թե վաճառելու, այլ իր ընտանիքի կարիքների համար, այսինքն անային սպառման կամ աղջկա ոժիտի կամ հենց մեկին ընծայելու համար և միայն ծայրահեղ կարիքի դեպքում և վաճառում այն: Իրա համար ել չքավոր ընտանիքներն են, վոր գորգեր արտադրում են ալելի շատ շուկայի համար կամ ուրիշների պատվերներով: Այսպիսով գորգերը դառնում են վաճառքի առարկա:

Իեռ սրանից 80—100 տարի առաջ, յերբ քիմիական անե-լինի ներկեր չկային, գորգերի թելերը ներկվում էյին բացառա-պէս բուսական ներկերով և այդպիսի գորգերից լավագույնները, դեռ այն ժամանակ, բավական բարձր էյին գնահատվում:

Հատկապէս նրանք բարձր էյին գնահատվում՝ յեվրոպական ու ամերիկյան շուկաներում:

Լավորակ գորգերով առանձնապէս հետաքրքրվում են նաև Յեվրոպայի ու Ամերիկայի թանգարանները: Որինակ՝ ի թիվս այլ յերկրների գորգերի մի քանի թանգարաններում (Վիեննա, Փարիզ, Բեռլին, Լոնդոն) մինչև այժմս ել պահվում են մի քանի շատ բարձր վորակի Հայկական հին գորգեր:

Այդպիսով գորգերի վաճառքը քանի գնում աշխուժանում եր այն չափով, վոր չափով առևտուրը զարգանում եր արևելյան և արևմտյան յերկրների ու Ամերիկայի վաճառականութեան միջև:

Գորգերի արտահանումը Անդրկովկասից Յեվրոպա ու Ամերի-կա ուժեղ զարկ և ստանում սրանից մոտավորապէս 50 տարի

առաջ, այն և 1878 թ. Ռուս-թուրքական պատերազմից հետո, յերբ ցարական Ռուսաստանը տիրապետում և Բաթումը և ծովային ճանապարհ և բացվում Յեվրոպական շուկաների հետ, ուր գոր-գերն առաջացնում են խոշոր հետաքրքրութեան ու պահանջ, իսկ նրանց առևտուրը վաճառականների համար հանդիսանում եր չա-փազանց շահավետ մի գործ: Իրա համար ել գորգերն սկսում են արտադրվել վոչ միայն գորգագործների սեփական կարիքները բավարարելու համար, այլ և վաճառքի համար:

Գորգագործութեանը զարգացած յերկրներում, որինակ՝ Պարս-կաստան, Թյուրքիա և այն, սկսում են կազմակերպվել նաաուկ գորգագործական արհեստանոցներ, նույնիսկ մեքենայացված գոր-ծարաններ:

Հետագայում գորգի խոշոր գործարաններ հիմնվում են նաև Յեվրոպական յերկրներում և Ամերիկայում, վորոնք գլխավորա-պէս ընդորինակում են արևելյան գորգերի նկարները:

Այդ մեքենայացված գործարանների գորգերն իրենց արտա-քին տեսքով վոչ միայն չէին տարբերվում սնայնագործական գորգերից, այլ և թվում էյին գեղեցիկ, վորովհետև գործված են լինում միանգամայն ուղիղ և համաչափ, մյուս կողմից ել այդ գորգերն ալելի եժան են գնահատվում, ուստի զգալի չափով մրցում են սնայնագործական գորգերի հետ:

Այնուամենայնիվ ձեռքով գործված գորգերի պահանջը, շնոր-հիվ նրանց յուրահատուկ գեղեցիկութեան և դիմացկանութեան, տարեց-տարի մեծանում և, և գորգագործութեանը գնալով ալելի ևս սկսում և ծավալվել ու զարգանալ, գլխավորապէս արևելյան յերկրների չքավոր իրավերի մեջ, վորոնց համար այդ արհեստը հանդիսանում և միակ յեկամտի աղբյուր, թեև այդ յեկամտը լինում և չնչին, շնորհիվ զաղութային անխնա շահագործմանը:

Գորգագործութեան քանակապէս ծավալման գուզընթաց սկըս-վում և գորգերի վորակի անկումը, շնորհիվ այդ ժամանակաշրջա-նում Անդրկովկաս մուտք գործած Յեվրոպական քիմիական խու-նացող անելին ներկերի, վորոնք իրենց եժանութեան և ներկելու ձևի հեշտութեան տեսակետից շատ շուտ տարածվում են ինչպես մյուս յերկրների, նույնպէս և Հայաստանի գորգագործական շրջաններում:

Սակայն մյուս յերկրներում գորգագործների վորոշ մասը, յերբ համոզվում և, վոր այդ ներկերը դիմացկուն չեն, հրաժար-վում և այն գործածելուց, մինչդեռ Հայաստանում զրեթե բոլոր

գորգագործներն ամբողջովին անցնում են այդ ներկերի ոգտագործմանը, ուշադրութիւն չդարձնելով, վոր այդ անեղին ներկերը խոնամնում են և դրանով իսկ գցում են Հայաստանի գորգերի վորակը: Բացի դրանից, Հայաստանի գորգերի վորակն ավելի ևս ընկնում է նաև այն պատճառով, վոր գորգագործներն սկսում են գործածել նոր Յեվրոպական նկարներ, որինակ՝ վարդեր, ծաղկեփունջեր, զանազան կենդանիներ, թռչուններ, վորոնք հարգի չեն գորգերի նկատմամբ:

Բացի դրանից, գորգագործների շահագործումն առևտրականների կողմից քանի գնում ուժեղանում է: Գորգագործների խոշոր մասը, այսինքն շուկայի համար աշխատողները գիտենալով, վոր գնորդը կամ պատվիրողը միևնույն է չի գնահատելու իր աշխատանքը և բավարար վարձատրութիւն չի տալու նրան, աշխատում է անուշադիր վերաբերվել գորգի հյուսվածքի վորակին, վորի շնորհիվ գորգերն ստացվում են մեծ մասամբ թույլ նոսր գործված, ծուռը, խորդուրդը և այդ բոլորը միասին միանգամայն անարժեք են դարձնում Հայաստանի գորգերի խոշոր մասը, և նրանց արտահանումը զանազան յերկրներ իսպառ դադարում է: Չնայած դրան, գորգերի արտադրութիւնը Հայաստանում քանակապես աճում է, վորովհետև այդ անվորակ գորգերը ցածր գնահատվելով մատչելի յեն դառնում ներքին շուկայում վաճառվելու համար:

Հայաստանի գորգագործների տարեկան մաքուր յեկամուտը 1909—1910 թվականներում, մասնակի հետազոտութիւն տվյալների համաձայն, միջին հաշվով 40 ու բաձր չի յեղել, իսկ գորգագործութեամբ պարսպողների թիվը կազմել է կանանց ընդհանուր թվի 15 տոկոսը:

Այսպես է յեղել գորգագործութեան դրութիւնը մինչև 1914 թվի համաշխարհային պատերազմը, իսկ պատերազմի հետևանքով գորգերի եքսպորտը և վաճառքը ներքին շուկայում միանգամայն կանգ առավ: Գորգագործութեան քայքայման համար նշանակութիւն ունեցավ նաև լեղակ (ինդիգո) ներկի բացակայութիւնը, վորը ստացվում էր Գերմանիայից, այդպիսով գորգերի արտադրութիւնն աստիճանաբար սկսեց պակասել, իսկ 1915—1916 թվերին նա համարյա ամենուրեք բոլորովին դադարեց գոյութիւն ունենալուց:

Մինչև համաշխարհային պատերազմը Ռուսաստանի ցարական կառավարութիւնը շատ քիչ ուշադրութիւն էր դարձնում գոր-

գագործութեան զարգացման, գորգերի վորակի բարձրացման վրա, գորգագործները թողնված էլին իրենց բախտին ու ամբողջովին չարջի առևտրականների շահագործմանը: Չկար և վոչ մի հասարակական կազմակերպութիւն, վորը մտահոգված լիներ ոգնութեան գալու գորգագործներին, ցույց տալով նրանց, թե ինչ տեսակի ու վորակի գորգերն են ավելի գնահատվում արտաքին շուկայում ու ավելի շահավետ կարող են լինել իրենց՝ գորգագործների համար:

Միևնույն ժամանակ չնայած նրան, վոր գորգերի առևտրով զբաղվում էլին բավականին թվով մանր ու խոշոր առևտրականներ ու գորգի առևտրից անազին հարստութիւն ձեռք բերում, այնուամենայնիվ նրանք ընդհանրապես խուսափում էլին գորգերի արտադրութեան արհեստանոցային ձևից, իսկ վորձ կատարողներն էլ հանդիպում անհաջողութեան, գլխավորապես այն պատճառով, վոր այդ ավելի ձեռնաու յեր անաշխատողների միջոցով արտադրել, քան վարձու բանվորական ուժի, վորի արժեքը համեմատած ավելի բարձր էր և վորը բարձրացնում էր գորգերի քանակը: Բացի այդ, առհասարակ նրանք այնքան էլ շահագրգռված չեն յեղել խոշոր կապիտալ ներդրել այդ արտադրութեան մեջ, քանի վոր կապիտալի շրջանառութիւնը գորգերի արտադրութեան բնագավառում կատարվում է վոչ այնքան արագ, ինչպես գորգերի առևտրի մեջ:

Գորգերի արտադրութեան համար արհեստանոցներ կազմակերպվել են առաջին անգամ Պարսկաստանում, վորտեղ խոշոր թվով ներգրավել են տղամարդիկ, այն էլ գլխավորապես քաղաքներում: Այնտեղ գոյութիւն ունեն բազմաթիվ մանր արհեստանոցներ, վորոնց մեջ աշխատում են բացառապես տղամարդիկ և 10—12 տարեկան յերեխաներ, վորոնք անխնա կերպով շահագործվում էլին ձեռնարկատերերի կողմից: Նման արհեստանոցներ հետագայում յեղել են և ներկայումս գոյութիւն ունեն թյուրքիայում, Հնդկաստանում, Չինաստանում և Հունաստանում:

Իսկ նախկին Ռուսաստանի գորգագործական շրջաններում, ինչպես թուրքմենաստանում, Ազրբեջանում և Հայաստանում մինչև Հոկտեմբերյան հեղափոխութիւնը, բացի մի քանի պետական ցուցադրական դպրոց-արհեստանոցներից, այն էլ միայն Ազրբեջանում, ուրիշ հատուկ արդյունաբերական բնույթ կրող արհեստանոցներ բոլորովին չեն յեղել, չհաշված գյուղական այն անային տիպի արհեստանոցները, վորոնք պատահական կերպով բացվել ու փակվել են գյուղի կուլակային տարրերի կողմից, ժամանա-

կալիբրապես շահագործելով չքավոր գեղջիկների գորգագործներին:

Գորգերի խոշոր արտադրությունն առաջին անգամ ձեռնարկում է Գերմանական կառավարությունը Պարսկաստանում 1910 թվին և այդ գործը դրվում է կապիտալիստական բնույթի ուսուցիչական հիմքերի վրա: Չնայած այդ ժամանակներում Յեվրոպայում ու Ամերիկայում արդեն գոյութուն ունեյին գորգերի խոշոր մեքենայացված գործարաններ, սակայն գերմանացիք գերադասում են գորգերն արտադրել անախագործական յեղանակով, իսկ մեքենայացնում են միայն գորգաթելերի արտադրությունը և ներկելը: Այդ նպատակի համար նրանք Թավրիզում կառուցում են մի հսկայական գործարան:

Գերմանացիները նպատակ եյին դրել գորգագործներին մատակարարել լավ ներկված թելեր, արժեքավոր նկարներ և դեկավարել արտադրությունը հատուկ պատրաստված մասնագետներով: Այդպիսով նրանք պատվերների միջոցով, թե արհեստանոցներում և թե առանձին գորգագործների աներում կարողանում են արտադրել շատ բարձր վորակի և գեղեցիկ գորգեր, վորոնք խոշոր հաջողություն են ունենում յեվրոպական և ամերիկական շուկաներում:

Սակայն այդ ձեռնարկության գոյութունը յերկար չի տեւում: Համաշխարհային պատերազմի ընթացքում, յերբ ուսական բանակը 1915 թ. հասնում է Թավրիզ, գրավում է այդ գործարանը և բոլոր պատրաստի գորգերը, թելերն ու նյութերը փոխադրում Թիֆլիս և հանձնում այնտեղի տնայնագործական կոմիտեյին, իսկ մանաթանի մեքենաներն ու մնացած սարքավորումը փոխադրվեցին Հյուսիսային Կովկասի Ստավրոպոլ քաղաքը:

Գրեթե նման ձեռնարկություն, բայց ավելի փոքր ծավալով, սակայն հանրոգուտ նպատակներով գոյութուն ունեւ նաև Թիֆլիսում 1907 թվականներին, վորը կոչվում էր «Կովկասյան Տնայնագործական Կոմիտե» և կազմակերպված էր հայտնի գյուղատնտես Հար. Փիրալյանի ջանքերով:

Այդ կոմիտեն, կազմված լինելով պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, նպատակ ուներ նպաստելու Կովկասի տնայնագործական արդյունաբերությանը և կազմակերպչական ու տեխնիկական խորհուրդներով ոգնել տնայնագործներին զարգացնելու և կատարելագործելու իրենց արհեստները:

Այդ ուղղությամբ կոմիտեն իր գլխավոր ուշադրությունը դարձրեց գորգագործության ու ջուլհակության արհեստների

զարգացման վրա, վորպես ամենատարածված և խոշոր սնտեսական նշանակութուն ունեցող արհեստներ: Այդ նպատակի համար Թիֆլիսում 1912 թ. կառուցել էր մեկ հատուկ շենք, վորտեղ տեղավորված եյին մեքենայացված մանարան, գորգերի համար բրդյա թելեր պատրաստելու ներկատուն իր լաբարատորիայով, նկարչական արհեստանոց գորգերի համար, նկարներ պատրաստելու, հյուանոց՝ գորգերի տորքեր շինելու, համապատասխան պահեստներ և բավականին ընդարձակ թանգարան, վորտեղ հավաքված եյին ամեն տեսակի տնայնագործական արտադրանքների արժեքավոր նմուշներ ու լուսանկարներ:

Այդ կոմիտեն իր գործունեյությամբ բավականին դրական աշխատանք կատարեց Կովկասում գանազան արհեստների մասնագետներ պատրաստելու ասպարեզում դպրոց-արհեստանոցների և գասընթացների միջոցով, գլխավորապես Ադրբեյջանում և Վրաստանում, բացի դրանից նաև գործուղելով ուսանողներ Ռուսաստան հատուկ տեխնիկոմներ, վորտեղ յերկու դպրոց կար՝ մեկը Սոսնովեց քաղաքում աղջիկների համար, իսկ մյուսը Վոշնիչ Վլոչոկ քաղաքում տղաների համար:

Այստեղ անհրաժեշտ է նշել այդ յերկու դպրոցների չափազանց ոգտակար դերն ընդհանրապես Անդրկովկասի և մանավանդ Հայաստանի գորգագործության և ջուլհակության արագ զարգացման համար: Այդ դպրոցներում 3—4 տարվա ընթացքում ուսանողները հիմնովին պատրաստվում եյին թե տեսականորեն և թե գործնականորեն:

Այդ դպրոցների շրջանավարտները, վերադառնալով Անդրկովկաս աշխատում են տնայնագործական կոմիտեյում, վորպես գորգագործության և ջուլհակության մասնագետներ ու դպրոց-արհեստանոցներում հրահանգիչներ, պատրաստելով նոր կադրեր: Սակայն 1914 թ. պատերազմը քայքայեց ամեն ինչ ու ցիր ու ցյան արավ այդ կադրերը:

Կովկասյան տնայնագործական կոմիտեյի որինակով Թիֆլիսում և Բազվում մի քանի նման դպրոց-արհեստանոցներ կազմակերպվել եյին Անդրկովկասում Հայոց-բարեգործական և Բազվի մարդասիրական ընկերությունների կողմից, ուր սովորում եյին գլխավորապես ջուլհակության տեսականը և գործնականը, իսկ գորգագործության սիայն գործնականը, վորի հետևանքով գործվում եյին միայն հասարակ տեսակի գորգեր, վորը վոչ մի արդյունք չի տալիս ու այդ պատճառով էլ այդ գորգագործական

արհեստանոցները յերկար կյանք չունեցան և շուտով մեկը մյուսի հետևից փակվեցին:

Նման արհեստանոցներ համաշխարհային պատերազմի ընթացքում ու մինչև 1924—1925 թ. թ. Հայաստանի սահմաններում և գլխավորապես Յերեվանում կազմակերպվեցին Ամերիկական կոմիտեյի կողմից, սակայն այդ արհեստանոցները, թեև իրենց ծավալով բավականին խոշոր էին, բայց, վորովհետև արտադրության տեխնիկայի դեկավարությունը հանձնված էր վոչ կուլտուրապես պատրաստված մասնագետներին, ուստի թե՛ ջուլհակությունը և թե՛ գորգագործությունն ափսոսելի կատարվում էր չափազանց պրիմիտիվ ձևերով և ստացվում էր շատ ցածր վորակի արտադրություն, և վոչ մի գրական դեր չխաղացին կադրերի պատրաստման ասպարեզում:

1918—1920 թվականներին Հայաստանում դաշնակցության իշխանության որոշ գորգագործության դրությունը վոչ միայն չլավացավ, այլ ընդհակառակն աղգամիջյան կռիվների ու տնտեսական ընդհանուր անկման շնորհիվ ավելի ևս քայքայվեց և նույնիսկ վորոշ շրջաններում բոլորովին անհետացավ ու իսպառ չքացավ:

Իրան գուգընթաց Հայաստանից արտահանվում էին այն բոլոր քիչ թե շատ արժեքավոր գորգերը, վորոնք մնացել էին տեղի բնակիչների մոտ:

Քիչ չէին դեպքեր, յերբ դաշնակցական խմբապետների կողմից դանադան պատրվակի տակ, կամ բացարձակ թալանի միջոցով խլում էին գյուղացիներին նրանց գորգերն ու վաճառում արտասահմանից յեկած հափշտակիչներին:

Գորգերը և արժեքավոր վալյուտային իրերը ձեռք էին բերվում գլխավորապես զանազան ոտարերկրյա ներկայացուցիչների, միսիանների և անհատ սպեկուլյանտների կողմից, վորոնց թիվն որ որի վրա այդ ժամանակ Հայաստանում ավելանում էր: Այդպես շարունակվեց ամբողջ 3 տարի մինչև 1921 թ., յերբ Հայաստանում հաստատվեց Խորհրդային իշխանություն և ընդմիջտ վերջ տվեց այդ գիշատիչ կողոպուտին:

## ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՔ

1920 թ. վերջերին Հայաստանում Խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո, ինչպես մեր տնտեսության բոլոր բնագավառներում, այնպես և տնայնագործության ասպարեզում սկզբվում է վերականգնում:

Առաջին տարիներում գորգագործությունն աչքաթող էր արված, գորգագործներից շատ քչերին է միայն հաջողվում սկսել մոռացության տրված գորգերի արտադրությունը, այն էլ իրենց կարիքների համար, իսկ մեծամասնությունը զուրկ լինելով գործիքներից և անհրաժեշտ նյութերից, չէր կարողանում դրադիվել իր հին արհեստով:


1921 թ. Խորհրդային կառավարության ուշադրությունն և գրավում գորգագործությունն և ոգոստոսին ՀԱԽՆԸ Ժողովուրդի հրատարակում է մի դեկրետ «Տնայնագործական ու մանր արդյունաբերության ոժանդակելու միջոցների մասին» և նույն թվի ոգոստոսի 24-ի դեկրետով Ժողովուրդին առընթեր հիմնվում է տնայնագործական ու մանր արդյունաբերական գործերի վարչություն: Սակայն այդ վարչության գործունեյությունն սպասված արդյունք չի տալիս, և 1923 թ. նա կազմալուծվում է: Այդ ժամանակ թիֆլիսից հրավիրվում է մի մասնագետ, վորը դեռ 1922 թ. կառավարության առաջ խնդիր է հարուցել Հայաստանում ստեղծելու մի հատուկ պետական մարմին, ոժանդակելու յերկրի տնայնագործական արդյունաբերության զարգացման ու արհեստավորներին կոոպերատիվ հիմունքներով կազմակերպման գործում:

1925 թ. մարտ ամսին Ժողովուրդի վորոշումի համաձայն Յերեվանում կազմակերպվեց Հայաստանի Տնայնա-արհեստագործության Կոմիտե, վորն աշխատանքի անցավ միայն հունիսից:

Կոմիտեյի առաջ խնդիր էր դրված ոժանդակելու տնայնագործական բոլոր արհեստների զարգացմանը, նրանց տեխնիկայի

կատարելագործման, սնախազործների և արհեստավորների կոտակ-  
բացմանն ու նոր կազմերի պատրաստմանը:

Նախքան սնախազործական կոմիտեյի գործի անցնելը, 1924  
թվի վերջերին Յերեվանում, Բաղխորհրդի ոժանդակությամբ,  
Սոցապրահանին կից կազմակերպվել էր մեկ գորգագործական ար-  
հեստանոց 25—30 գորգագործներով, ղեկավարությամբ մասնա-



Նկ. № 1. Ս. Հոյաստանի Պետերիշը գործված Յերեվանի արհեստանոցում  
1926 թ. Գ. Գարանֆելյանի ղեկավարությամբ:

գետ և նկարիչ Դ ո վ լ ե թ Գ ա ր ա ն Փ ի լ յ ա ն ի, վորը նոր էր յեկել  
արտասահմանից (Հալեպից):

Այդ արհեստանոցում զանազան վորակի գորգերի թվում  
արտադրվում էին նաև նույն Գ ա ր ա ն Փ ի լ յ ա ն ի պատրաստած

նկարներից և նրա անմիջական ղեկավարությամբ մի շարք գորգեր  
հեղափոխական գործիչների՝ Կարլ Մարքսի, Լենինի և Կալինինի  
պատկերներով, շատ հաջող նմանությամբ, վորն առհասարակ չա-  
փազանց դժվար է հաջողացնել գորգերի վրա:

Միաժամանակ այդ արհեստանոցում առաջին անգամ գործվե-  
ցին մի քանի բարձրորակ հայկական վոճի գորգեր և մեկ կլոր  
գորգ, ՀՍՍՀ պետնիշով: (Նկ. № 1):

Այնուամենայնիվ այդ արհեստանոցը 2 տարի գոյություն  
ունենալուց հետո փակվեց, կազմակերպչորեն նպատակահարմար  
հիմքերի վրա դրված չլինելու և բավականաչափ շրջանառու մի-  
ջոցներ չունենալու պատճառով: Հետագայում Գ ա ր ա ն Փ ի լ յ ա ն ը  
շարունակեց աշխատել իր համար, գործելով մի շարք հայտնի  
հեղափոխական գործիչների հաջող պատկերներ, վորով նա խոշոր  
հռչակ վաստակեց, իբրև տաղանդավոր արվեստագետ գորգագոր-  
ծության ասպարիզում:

Այդ ժամանակ մեկ գորգագործական արհեստանոց կազմա-  
կերպված էր նաև Կիրովականում, վորտեղ աշխատում էին 15—20  
գորգագործներ, սակայն հմուտ ղեկավարի բացակայության պատ-  
ճառով գորգերն արտադրվում էին ցածր վորակի, վոչ եքսպոր-  
տային, վորի հետևանքով այս արհեստանոցը ևս չկարողացավ  
շարունակել իր գոյությունը և փակվեց 1927 թվին:

28563  
5001

7107

### Տ Ն Ա Յ Ն Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե Յ Ի Գ Ո Ր Ծ ՈՒ Ն Ե Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

Տնախազործական կոմիտեն առաջին հերթին իր ուշադրու-  
թյունը դարձնում է Հայաստանում ամենատարածված յերկու  
արհեստների՝ շուլհակության ու գորգագործության զարգացման  
վրա, վորոնք տեխնիկայես շատ հետամնաց վիճակում էին:  
Գորգագործությունն սկսել էր վերականգնել մի քանի շրջանե-  
րում անհատ գորգագործների մոտ, իսկ շուլհակությունը, թեև իր  
գոյությունը դեռ մի կերպ շարունակում էր, բայց շատ ցածր  
վորակի արտադրանք տալու հետևանքով, այն էլ գտնվում էր իր  
հոգեվարքի մեջ, վորովհետև խոշոր քանակությամբ ու եժան  
գներով կտորեղեն էր ստացվում կենտրոնական նահանգներից, վո-  
րի հետևանքով մնացել էին միայն մի քանի արհեստանոց, այն  
էլ Յերեվանում: Այդ անմխիթար վիճակից հանելու համար կոմի-  
տեն նպատակահարմար համարեց շարոց-արհեստանոցի միջոցով



նախ պատրաստել անհրաժեշտ թվով նոր մասնագետ կադրեր: Ուստի այդ նպատակի համար Վրաստանից հրավիրվեց այդ յերկու արհեստներին հմուտ մասնագետ Սրբուհի Բրոյանցը, վորը Սոսնովեցի հրահանգչական դպրոցն ավարտեուց հետո յերկար տարիներ աշխատել եր ուսուցչուհու պաշտոնով նախկին կովկասյան տնայնագործական կոմիտեյի դպրոց-արհեստանոցներում:

Այդպիսով առաջին անգամ Յերեվանում հիմնվեց գորգագործության ու ջուլհակության դպրոց-արհեստանոց, վորը խոշոր դեր կատարեց հետագայում Հայաստանի գորգագործության ու ջուլհակության զարգացման և կատարելագործման ասպարեղում: Սակայն դրամական միջոցներ չունենալու պատճառով տնայնագործական կոմիտեն ստիպված յեղավ ժամանակավորապես հրաժարվել բրդյա կտորեղենների ու գորգերի արտադրությունից և իր ուշադրությունը դարձրեց բամբակյա կտորեղենների արտադրության վրա: Այդ նպատակի համար ձեռք բերեց փակվելու աստիճանին հասած ջուլհականոցներից մեկն իր 10 դագախներով, Լենինականի տեքստիլ գործարանից 100 կիլո պատրաստի բամբակյա մանվածք և անցավ աշխատանքի:

Թիֆլիսում ձեռք բերվեց նաև մեկ մամուլ (պրես) կտորեղենները մամրելու (վերամշակելու) համար, վորպիսին մինչև այդ Հայաստանում չկար:

Տնայնագործական կոմիտեն այնքան զուրկ եր միջոցներից) վոր նույնիսկ չկարողացավ ձեռք բերել մեկ փոքր շենք ներկատան համար և սկզբնական շրջանում գործվածքեղենների թելերը ներկվում էյին փողոցի մայթի վրա, մի փոքր կաթսայի մեջ: Չնայած մի շարք անհարմարություններին և շրջապատի թերահավատ վերաբերմունքին, մեկ ամիս չանցած այդ արհեստանոցի նոր սովորող կադրերի արտադրած կտորեղենները՝ շտալանդկան և սարպլինկան, արդեն բավական նուրբ և բարձր վորակի էյին և հաջող էյին վաճառվում:

Բացի դրանից, այդ արհեստանոցում պատրաստվեցին նաև մի քանի գորգագործներ, վարժվելով նոր կատարելագործված տորքերի վրա: Այդ գորգագործներն արտադրեցին մի շարք գորգերի բարձր վորակի նմուշներ, վորոնց գործվածքի խտությունը մեկ քառակուսի մետրի մեջ կազմում եր 250.000 հանգույցից մինչև 300,000 հանգույց, վորպես խտության գորգեր Հայաստանում մինչ այդ չէյին գործված, բայց և այնպես միջոց-

ների սղության պատճառով հնարավոր չեղավ գորգերի արտադրությունը լայն կերպով ծավալել մինչև 1927 թ., յերբ պետության կողմից այդ նպատակի համար կոմիտեյի հաջորդ Հայտնարկոպլին տրամադրվեցին հատուկ միջոցներ:

Տնայնագործական կոմիտեն մինչև այդ ստացել եր 5000 ու կարճատե վարկ, վորը նույնպես հնարավորություն չեր տալիս նրան ձեռնամուխ լինել գորգերի կամ մանուղի արտադրության կազմակերպմանը, վորի համար պահանջվում ե առհասարակ յերկարատե վարկ, ուստի կոմիտեն ստիպված եր այդ ստացած գումարն ոգտագործել, ինչպես բամբակյա կտորեղենների արտադրության ծավալման, նույնպես և այլ արտադրությունների արտելների կազմակերպման համար:

Այդպիսով առաջին անգամ Հայաստանում—Յերեվանում կազմակերպվում են մի շարք կոոպերատիվ արտեխներ, ջուլհակության, ծխախոտագործության, ասեղնագործության, փայտամշակման և այլն:

Այդ արտեխներից առանձնապես խոշոր նշանակություն ունեցավ ջուլհակներինը, վորը կազմակերպվեց կոմիտեյի արհեստանոցում պատրաստված ու Տաճկաստանից յեկած արաբկիրցի ջուլհակներից:

1926 թ. ոգոստոս ամսին կազմակերպվում ե Հայտնարկոպլը, վորի առաջ դրված են լինում նույն նպատակները, ինչ վոր ունեցել եր տնայնագործական կոմիտեն, դրա համար նոր վարչությունն իր աշխատակիցներով նույն յեռանդով ու նվիրվածությամբ շարունակում ե կոոպերացներ, ներգրավելով իր ցանցում նորանոր տնայնագործներ ու արհեստավորներ:

1927 թ. վերջերին արտեխների թիվն արդեն կրկնապատկվում ե, միաժամանակ նրանք խոշորացվում են, կային նաև գորգագործական 7 արտեխներ մոտ 200 անդամներով, ընդվորում գորգագործության զարգացման և եքսպորտ գորգերի արտադրման համար պետությունը բաց ե թողնում Հայտնարկոպլին հատուկ վարկ, դրանով հնարավորություն եր ստեղծվում առանձնապես ուշադրություն դարձնել այդ կարևոր արհեստի վրա, վորի համար ձեռք ե բերվում անհրաժեշտ քանակի բուրդ, ներկեր, գործիքներ և տարվում ե լայն կազմակերպչական աշխատանք:



# ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՇՐՋԱՆԸ

Նկատի ունենալով գորգագործության առանձնահատուկ և բարձր բնույթը, նրա արտադրութիւնը ղեկավարելու համար Հայտնարկոտայն իր ապարատում ստեղծում և հատուկ բաժին:

Գորգագործական բաժինը նպատակ է դնում գորգագործներին մատակարարել պատրաստի թելեր, կատարելագործված տորքեր (գազգյահներ) գործիքներ, արժեքավոր գորգերի նկարներ, և սովորեցնել արտադրելու ավելի նուրբ գործվածքի ու միորինակ



Բրդյա թել մանելը Իջևիանի գորգարտելում 1928 թ.

(ստանդարտ) չափերի գորգեր: Միաժամանակ աշխատում և ձեռք բերել բրդի վերամշակութիւնը—գզելու և մանելու մեքենաներ, այսինքն վորոշ մեքենայացում մտցնել աշխատանքի պրոցեսի մեջ. մինչ այդ անհրաժեշտ է լինում բրդի վերամշակումը կատարել ձեռքով՝ հենց շրջանի գորգագործական արտեղներում, իսկ գորգի խավի թելերն անպայման բունական ներկերով ներկելու համար շրջաններում կազմակերպվում են հատուկ ներկարարական արտեղներ:

Այդ բոլոր աշխատանքը կատարվում է չափազանց դժվարին պայմաններում, համապատասխան հարմար շենքեր և անհրաժեշտ թվով պատրաստված մասնագետ կադրեր չունենալու հետևանքով:

աշխուճման այնպիսի, յերբ աշխատանքները հետզհետե ծավալվում են, անհրաժեշտ է դառնում նոր մասնագետ կադրեր պատրաստել, վորպիսի նպատակով 1928 թ. սկզբին Իջևիանում կազմակերպվում է Չամսյա գորգագործական դասընթացներ, վորտեղ հրահանգչուհի Բրոյանցի անմիջական ղեկավարութիւնով տեղական գրագետ գեղջուհիներից գործնականորեն և տեսականորեն պատրաստվում են տասը նոր մասնագետներ, վորոնք հետագայում կարողանում են ինքնուրույն կերպով ղեկավարել գորգագործական արտեղների աշխատանքները:


Նման դասընթացներ հետագայում կազմակերպվում են նաև Հայաստանի մյուս շրջաններում, ու մինչև 1931 թ. հիշյալ կադրերի թիվը 100-ից անցնում է: Նրանցից շատերը մինչև այժմ էլ գորգագործության բնագավառում աշխատում են ղեկավար մասնագետների պաշտոններում և իրենց հերթին պատրաստում են նոր կադրեր:

Այդ կադրերից պետք է հիշատակել գորգագործական հրահանգչուհիներ Հրանուշ Այնաշյանին, վորը 1932 թ. ընթացքում յեղել է Գորգմիութիւնյան վարչութիւնյան նախագահ, Բեշան Աթաբեկյանին ու Սողոմոն Բաղդասարյանին:

Վերոհիշյալ ձեռնարկումների շնորհիվ Հայտնարկոտայն արդեն 1928 թ. կարողանում է առաջին անգամ հանձնել Անդրպետառի բաժանմունքին եքսպորտի համար մոտ 2000 մետր բավականի բարձր վորակի գորգեր, վոր արտահանվում է Անգլիա, Ամերիկա և Գերմանիա և ունենում է խոշոր հաջողութիւն: (Նկ. № 3):

Հայաստանի գորգերի վորակի մասին հետագայում թե Անգլիայի և թե Ամերիկայի մեր Արտաքին Առևտրի Ժողովմատի ներկայացուցիչների կողմից ստացվում են շատ դրական, նույնիսկ գովասանական ինֆորմացիաներ: Այդ տեսակետից ուշադրութիւն արժանի յե գերմանական մի շաբաթաթերթի «Գոյչեմենուլի ցայտունգ»-ի հոդվածը, վորը նվիրված է 1930 թ. գորգերի միջազգային առևտրին, վորտեղ իմիջի այլոց գրված է հետևյալը՝

«Ընդհանրապես գորգերի արտադրութիւնը ևս թորհրդային Միութիւնյան հնգամյա պլանի հիման վրա, դեռ չտվեց այն աջոյունքը, վորի շնորհիվ նոր արտադրված գորգերն իրենց վորակով և չափերով բավարար են եքսպորտ շուկայի պահանջներին, ընդհակառակը, այդ պահանջներին հարմարվեն այնտեղ կատարվում է շատ դանդաղ և ինչպես յերեվում է գորգերի արտադրողներին դեռ հայտնի չեն արտասահմանյան շուկայի




Նկ. 3. Գորգ պարսկա-հայկական վոճի գործված Լենինականի, արհեստանոցում 1934 թ.

ներկա պահանջները, այնպես, վոր միայն մի քարի ընկերություններ տալիս են այդ շուկային ներկա պահանջներին համապատասխան ապրանք, այն ել չափազանց բարձր վորակի: Պետք է շեշտել Հայաստանի արհեստագործական ընկերությունը՝ «Հայտնարկոպը», վորի արտադրած գորգերը հաջող վաճառվում են Յեվրոպական շուկաներում: Այդ գորգերի վորոշ քանակն ստացվեց այստեղ 1930 թ. և վաճառվեց մի քանի որվա մեջ: Խոսքը վերաբերում է հայկական բարձրորակ գորգերին, վոր գործված է լավ նկարներից և դիմացկուն ներկերից ու մենք պատահել ենք նախապատերազմյան շրջանում Ռուսաստանի լավագույն գորգերի մեջ»:


Շաբաթաթերթում հիշված Հայաստանի այդ հաջողությունը պետք է վերագրել այն նպատակահարմար միջոցառումներին և գործի ճիշտ դրվածքին, վոր սկզբից կիրառվեցին Հայտնարկոպի գորգագործական բաժնի կողմից, այն է՝ գորգագործները կազմակերպվում էին կատարելագործված տորքերով ու գործիքներով, պատրաստի ներկված թելերով և արժեքավոր նկարներով:

Այդ հաջողությունը հետևանք էր նաև այն ղեկավարության, վոր ցույց է տրվում գորգբաժնի մասնագետ հրահանգիչների կողմից, վորի շնորհիվ և՛ հնարավոր յեղավ 1—2 տարվա ընթացքում վոչ թե միայն վերականգնել Հայաստանում գորգագործությունը, այլ և անհամեմատ բարձր տեխնիկայի աստիճանի հասցնել: Սակայն այստեղ ևս կային բացեր, որինակ՝ գործն ավելի լավ հիմքերի վրա դնելու համար դեռ բացակայում էին համապատասխան շենքեր, պահեստներ թե կենտրոնում և թե շրջաններում և դեռ բրդի վերամշակությունն ու թելերի ներկելու գործըն ամբողջովին կենտրոնացված չէր, չկային պահանջված քանակի տորքեր, գործիքներ, նաև չէր բավարարում ղեկավար մասնագետների թիվը, ուստի և բոլոր գորգերը 100 տոկոսով բարձր վորակի չէին:

Այդ բացերը վերացնելու համար անհրաժեշտ էր բավականին խոշոր կապիտալ ներդրումներ, սակայն այդ նպատակի համար հատկացված գումարները բավական չէին, դրա համար ել շինարարությունը կատարվում էր աստիճանաբար, մաս-մաս, վորի հետևանքով գորգերի արտադրությունն այնպիսի արագ թափով չէր ծավալվում, ինչպես այդ անհրաժեշտ էր պլանները կատարելու համար, իսկ մի շարք շրջաններում ել գորգագործությունը մնում էր անկազմակերպ վիճակում:



Բայց և այնպես Հայաստանում, շնորհիվ պետության լայն ոժանդակությամբ, հնարավորություն ունեցավ մի քանի տարվա ընթացքում գորգագործության կարիքների համար կատարել բավական խոշոր շինարարական աշխատանք: Այսպես 1918 թ. ձեռք բերվեց մեկ փոքր կոմպլեկտ բուրդ գզելու և մանելու մեքենաներ 80 մանող իլիկներով, իսկ 1930 թ. Գերմանիայից ստացվեց հատուկ պատվերով ավելի կատարելագործված սիստեմի մեքենաներ 200 իլիկով, նաև մեկ բուրդ վանալու մեքենա և այդպի-



Նկ. 5. Իջևիանի գորգագործական արտելի արհեստանոցի շենքը 1929 թ.

սով առաջին անգամ Հայաստանում հիմք դրվեց բրդի վերամշակության մեքենայացմանը:

Միաժամանակ այդ տարիների ընթացքում Յերեվանում կազմակերպվեց բավականին խոշոր ներկատուն, վորտեղ թելերը ներկելու և չորացնելու գործը կատարվում էր շոգիի միջոցով: Բացի դրանից Կիրովականում կառուցվեց մեկ բավականին մեծ շենք՝ սլահեստների և գորգերի արհեստանոցի համար, նման մեկ շենք ավելի փոքր ծավալի, կառուցվեց Իջևիանում: Պատրաստվեց ևս մոտ 2000 տորք ու անհրաժեշտ քանակի գործիքներ (մկրաս, բանակ, կառուտիչ) գորգագործներին մատակարարելու համար:

Այդպիսով առաջին հսկայական վերջին տարին, այն է՝ 1932 թ. սկզբներին Հայաստանում գորգագործական բաժինն իր

ցանցում ուներ 41 արտել 2900 գորգագործ անդամներով և այդ տարվա եքսպորտի պլանը (9000 քառ. մետր) գերակատարվեց և եքսպորտին հանձնվեց 9050 ք.մ. գորգ, իսկ ամբողջ առաջին հընգամյակի ընթացքում եքսպորտին հանձնված գորգերի քանակը կազմում է 22000 ք. մետր:

Գորգագործական արտեղներն ըստ շրջանների բաժանվում է յին հետևյալ կերպով՝

Յերեվան	1 արտել	Դիլիջան	2 արտել
Լենինական	3 »	Իջևան	10 »
Կիրովական	5 »	Շամշադին	7 »
Ալլահվերդի	5 »	Գորիս	3 »
Ստեփանավան	4 »	Սիսիան	1 »

1932 թ. ընթացքում արտեղների թիվը հասավ 45-ի 3200 գորգագործներով, վորից 4 նոր արտեղներ կազմակերպվեցին Դարալագյազի շրջանում:

Գորգագործության արագ զարգացումը դեռ 1930 թ. Հայտնարկոպի առաջ պահանջ դրեց ավելի ուժեղացնել գորգագործական բաժինը, վորի համար նպատակահարմար գտնվեց կազմակերպել գորգագործական կոոպերատիվ արտեղներ միություն և այդ նպատակով Յերեվանում հրավիրվեց բոլոր արտեղների ներկայացուցիչներին համագումար, ուր ընտրվեց Գորգմիության առանձին վարչություն և մտավ Հայտնարկոպի ցանցի մեջ:

Այդ վերակառուցման շնորհիվ գորգերի արտադրությունը տարվեց ավելի ուժեղ թափով: Դրան վորոշ չափով նպաստեց նաև այն, վոր այդ տարիներում արտասահմանից (Հունաստանից) Հայաստան ներգաղթեցին տաճկահայեր, վորոնց մեջ կային վորակավոր կլին գորգագործներ: Հաստատվելով Յերեվանում ու Լենինականում նրանք նշանակալից դեր կատարեցին այս յերկու քաղաքներում բարձր վորակի գորգերի արտադրության զարգացման գործում:

Նրանց հետ Հունաստանից յեկել էր նաև ընկ. Խորեն Մահտեսյանը, վորը գիտեր գորգերի քիմիական նյութերով վլանայու մասնագիտությունն և, հրավիրվելով Գորգմիության կողմից այդ աշխատանքին, սկիզբը դրեց Հայաստանում գորգերի քիմիական վլացման գործին, վորը հետագայում խոշոր նշանակություն է ունենում Միության և մյուս հանրապետությունների համար, վորտեղ այն դեռ գոյություն չունի:

Այսպիսով Գորգմիությունն ունենալով գորգագործությանն

սպասարկող բոլոր ոժանդակ մասնագիտական ճյուղերը (ցեխերը) մասամբ ամբողջովին մեքենայացրած, մասամբ կիսամեքենայացրած, ինչպես որինսկ՝ բուրդը վլանայու, գզերու, մանելու, թելերը վորերու (գորգի հենքի և միջնաթելի համար 1930 թ. սկսած գործածվում է բամբակյա թել), ձեռք է բերված հատուկ թել վորերու և բրդյա թելերը ներկելու մեքենաներ, սակայն այդ ձեռնարկությունների Յերեվան քաղաքում ցրվածության և միտեղ չկենտրոնացված լինելու հետևանքով խիստ դժվարացնում էր



Նկ. 6. Գորգմիության կենտրոնական պահեստի և գորգի արհեստանոցի շենքը Յերեվանում 1934 թ.

նրանց վրա անմիջական դեկավարություն ունենալը և միաժամանակ խոշոր ծախսեր էր պահանջում նյութերը մեկ ձեռնարկությունից մյուսը փոխադրելու համար:

Վերոհիշյալը նկատի ունենալով 1932 թ. Գորգմիության վարչությունը վորոշում է կառուցել Յերեվանում մի շարք շենքեր և այդ բոլոր ձեռնարկությունները կենտրոնացնել մեկ հողամասի վրա, սակայն միջոցների սղության պատճառով հնարավոր չի լինում բոլոր նախատեսված շենքերի կառուցումն սկսել միաժամանակ, ուստի նախ և առաջ ձեռնարկվում է կառուցել ամենամանրատեղ, այն է՝ կենտրոնական պահեստի, գորգագործական արհեստանոցի և վարչության գրասենյակի շենքը, վորը և ավարտվում է

1933 թ. վերջին: Նույն 1933 թվին Միութենական Արտաքին Առևտրի Ժողովմատի ոժանգակությամբ ձեռնարկվում է կառուցել գորգերի քիմիական լվացարանի արհեստանոցի շենքը, իսկ սկսած 1934 թ. կառուցվում է ներկատան շենքը և մեկ շենք էլ բանվորների ու մասնագետների բնակարանների և մսուրի համար:

Կենտրոնական պահեստի, գրասենյակի, գորգերի արհեստանոցի և մսուրի կառուցումով Գորգմիությունը հնարավորություն է ստանում կարգավորելու նախ պահեստի տշխատանքները, վորը



Նկ. 7. Գորգմիավորման գորգերի քիմիական լվանալու արհեստանոցի շենքը 1934 թ. Յերեվան

չափազանց խոշոր նշանակություն ունի գորգերի արտադրության գործում, վորոհետև նախքան թեկերն ու այլ նյութերը և գործիքները շրջաններ ուղարկելն ու արտադրության բաց թողնելը՝ անհրաժեշտ է պահեստում նրանց դասավորել, գտել, ստուգել վորակը, վորպիսի աշխատանքը նախկին փոքր, մուլթ, խոնավ պահեստներում հաճախ հնարավոր չէր լինում կատարել:


Գրասենյակի պահեստին մոտ լինելը նույնպես իր խոշոր առավելությունն ունի շրջանառության արագ կատարման ու անմիջապես ղեկավարության ու հսկողության համար:

Նույն շենքի վերին հարկում Գորգմիությունը կազմակերպեց

գորգերի բավականի մեծ արհեստանոց հարյուր գորգագործների համար, վորին կից՝ մսուր և մանկապարտեզ գորգագործների յերեխաների, այլ յեվ հատուկ մեկ սենյակ թանգարանի համար:

Գորգերի արհեստանոցի կազմակերպումը Յերեվանում վաղուց էր զբաղեցնում Գորգմիության վարչության, վորովհետև միայն արհեստանոցային պայմաններում հնարավոր է արտադրել ավելի բարձր վորակի գորգեր:

Գորգագործության մեջ հայկական վոճի վերականգման գործում,




Նկ. 8. Յերեվանի գորգարհեստանոցին կից մանկապարտեզ 1934 թ. վորը կազմում է Գորգմիության նպատակներից մեկը, վորոշ դեր կատարեց նայել Հունաստանից յեկած յերիտասարդ նկարիչ Հակոբ Քեչիշյանը, վորը լավ ծանոթ էր գորգերի տարբեր վոճերին և հատուկ ուսումնասիրել է հայկական գորգերի վոճը: Գորգմիության կողմից հրավերվելով աշխատանքի Քեչիշյանը պատրաստեց մի շարք հայկական վոճի նկարներ և վորոնցից սկսեցին արտադրվել առանձնապես արժեքավոր գորգեր:

Գորգմության ունեցած նվաճումներից առանձնապես պետք է նշել նաև գորգերի քիմիական լվացման գործի կարևոր նշանակությունը, վորն ունեցավ ամբողջ միության համար, վորովհետև այն բոլոր գորգերը, վորոնք արտահանվում էին արտասահմանյան շուկաները, նախքան վաճառելը նախապես յենթարկվում էին քիմիական լվացման:

Այդպիսի վացքատներ գոյութիւն ունեն թե Յեկրոսական յերկրներում և թե Ամերիկայում:

Գորգերի քիմիական նյութերով վանալը հետապնդում է մի քանի նպատակ — առաջին՝ դրանով փորձվում է գորգի թելերի գույները դիմացկանութիւնը և յետո՛ւ գորգի խավը ներկված է խուհացող ներկերով, վանալու ընթացքում այդ ներկերը կամ բոլորովին կամ զգալի կերպով կորցնում են իրենց գույնը, իսկ բուսական դիմացկուն ներկերն ընդհանրապէս՝ նրանց գույնն ավելի

✓✓✓



Նկ. 9. Յերեվանի գորգագործական արտելի գորգի արհեստանոցը  
60 տորքով, 110 աշխատող, 1934 թ.

պայծառանում է ու փայլ է ստանում, յերկրորդը՝ գորգը քիմիական նյութերով (խլոր, կաուստիկ և այլն) վանալուց յենթարկվում է ախտահանման (դեզինֆեկցիայի), ահա այդ նկատառումներով վերջին տարիներում արտասահմանում անհրաժեշտորեն պահանջվում է, վորպեսզի գորգերը նախքան վաճառելը քիմիապես վանան, սակայն Խորհրդային Միութեան մեջ վոչ վոքի հայտնի չէր գորգերի քիմիական վանալու միջոցը, իսկ վորովհետև Արտաքին Առևտրի Ժողովատը յուրաքանչյուր տարի խոշոր վալյուտային գումար եր վճարում արտասահմանում գորգերը վանալու համար, ուստի, յերբ հայտնի դարձավ, վոր Հայաստանում արդեն ձեռնարկվել է այդ աշխատանքին և գորգերը քիմիապես

վացվում են, այն ել շատ հաջող կերպով, առաջարկվում է Հայաստանի Գորգմիութեան ծավալել այդ աշխատանքն այնպես, վորպեսզի հնարավոր լինի մյուս հանրապետութիւններին ևս սպասարկել:

Նույն մասնագետ Խ. Մահուեսյանի առաջարկութեամբ և նրա կազմած նախագծով, վորոշվում է գորգերի վացման գործը յենթարկել մեքենայացման և արդեն պատրաստված է 3 վանալու մեքենա, վորոնք սարքավորվում են նոր արհեստանոցի շէնքում:



Նկ. 10. Գորգերի քիմիական վացումը ձեռքով 1934 թ. Յերևան


Բացի այդ Գորգմիութիւնը ձեռք է բերել գորգերի խավը խուզելու մեկ մեքենա, այդ մեքենաներն անհամեմատ ավելի արդյունք են տալու, քան այն, վոր այդ աշխատանքները մինչև այժմ կատարվում էին ձեռքով:

Գորգերի վացման գործը Խորհրդային Միութեան մեջ այժմ կատարվում է միայն Հայաստանում, ուստի բոլոր մյուս հանրապետութիւններից գորգեր ուղարկվում են վանալու Յերեվան, իսկ գորգեր վանալու գործը սովորելու համար Հայաստան են գալիս ուսանողներ այլ հանրապետութիւններից:

Թուրքմենստանի գորգագործական միութիւնը, վորն ամե-

նախոջերն և Նորհրդային Միութեան մեջ, ուղարկելով 2 ուսանող դիմել և Հայաստանի Գորգմիութեանը հետևյալ գրութիւնով՝

«Այն փաստը, վոր Միջին Ասիայում, համաձայն Ներշնչի նկարագրութեան, 10-րդ դարում, Նալբաթա թաղավորի պալատում գոյութիւն և ունեցել գորգերի արտադրութեան արհեստանոց և թուրքմենստանում, վորտեղ 13-րդ դարում համաձայն Մարկո-Պոլոյի (խտալացի գիտնական ճանապարհորդ) տեղեկութիւնները»



Նկ. 11. Գորգերի խողելը քիմ. լվանալուց հետո 1934 թ. Յերևան

արտադրվելիս են յեղել աշխարհի ամենալավ գորգերը, 1934 թ. ալտեղից Ձեզ մոտ՝ Հայաստան են գալիս սովորելու գորգերի վերամշակութեան ձևը, դա ապեցույց և այն բանի, վոր ինչպիսի խոջոր նվաճում և կատարել Հայաստանը գորգերի արտադրութեան զարգացման գործում»:

## ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒՅՅԱՆ ՆԵՐԿԱ ԴՐՈՒՅՅՈՒՆԸ

Առ 1935 թ. հունվարի 1-ը, Հայաստանի գորգագործութիւնն վրենից ներկայացնում և հետևյալ պակտերը, սկսած 1930 թ. Հայտնարկուովի գորգագործական բաժինը, մի քանի անգամ վերակառուցումից հետո, ավելի ու ավելի արագ թափով ծավալում և իր աշխատանքները և հետզհետե ընդգրկում և Հայաստանի համարյա բոլոր գորգագործական շրջանները, վորտեղ անցյալում գորգագործութիւն գոյութիւն չի ունեցել, ինչպես Նոր-Բայազետի և Մարտունու շրջանները:

Բացի գյուղական վայրերից, գորգերի արտադրութիւնը խոջոր չափով զարգանում և և քաղաքներում, նրաց թվում, գլխավորապես Յերեվանում, Լենինականում, Նոր-Բայազետում ու մասամբ Կիրովականում և Գորիսում: Ըստ վորում Լենինականում ու Յերեվանում արտադրվում են ամենաբարձրորակ գորգեր, շնորհիվ Հունաստանից ներգաղթած հմուտ գորգագործներին, վորոնց խոջոր մասը ներկայումս ընդգրկված և արհեստանոցներում:

Վերջին 2—3 տարիների ընթացքում Գորգմիութիւնն աշխատում և գորգերի արտադրութիւնը հնարավորին չափով գորգագործների տներից փոխադրել արհեստանոցները, նախ այն նպատակով, վոր ընդհանուր արհեստանոցում գորգագործները սովորում են կոլեկտիվ աշատանքի ու մնայուն կադրեր են հանդիսանում և յերկրորդ՝ արհեստանոցում շնորհիվ մասնագետ հրահանգչի մշտական հսկողութեան, ստացվում են անհամեմատ բարձր վորակի գորգեր:

Ներկայումս արհեստանոցներ կան համարյա բոլոր շրջաններում, վորոնցից որինակելին կարելի յե չհամարել Յերեվանի և Նուբարաշենի (Յերեվանի մոտ) արհեստանոցներն ու Կիրովականի «Ս. Բրոյանցի անվան» արհեստանոցը:

Այն շրջաններում, վորտեղ գորգագործութիւնը նոր և մացըվում, կազմակերպվում և ընդհանուր արհեստանոց ու մասնագետ հրահանգչի միջոցով տեղի գեղջկուհիները սովորում են գորգ գործել: Պետք և ասել, վոր բոլոր նոր սովորողները վարժվում են գորգ գործել վոչ թե միայն մասնաբով, այլ և կեռով (չանգալով), վորն ավելի հեշտացնում և աշխատանքը:

Գորգ գործելն առհասարակ բարդ արհեստ չէ, բայց մանրակրկիտ և: Նա կարելի յե սովորել մի քանի որվա մեջ, գլխավորապես պահանջվում և իմանալ գորգի հենքի պատրաստելու և

ասպը կապելու ձևը, նաև միջնաթելի անցկացնելու ձևը, իսկ հանգուլցների կապելը կարելի չե յուրացնել մի քանի բոպեյում:

Գորգը լավ գործելու համեր գլխավորապես պահանջվում է ուշադրութուն: Դրա համար ել նկատվում է, վոր մեծ մասամբ նոր սովորողներն ավելի ուշադիր են և գործում են լավ վորակի գորգեր, քան յերկար տարիներ աշխատող գորգագործները, յեթե պահանջված ուշադրութուն չեն ունենում դեպի աշխատանքը:

Գորգմիութունը 1934 թ. վերջին վերակառուցումից հետո անվանվում է Գորգմիավորում, վորի ընդհանուր ղեկավարութունն իրագործում է Հայտնարկոպը, հանձնիս նրա վարչության նախագահ Հ մ ա յ ա կ Յ եր գ ն կ յ ա ն ի:

Գորգմիավորման վարչության կազմը բաղկացած է հետևյալ բաժիններից՝ կազմարտադրական, պլան-հաշվառման, մթերման ու մատակարարման, կենտրոնական հաշվապահության և ընդհանուր բաժին, վորոնց գլխավորում է վարչության նախագահը:

Ներկայումս գորգագործական արտեղների մեծ մասը խոշորացված են և գտնվում են շրջանային կենտրոններում ու քաղաքներում՝ Յերեվան, Լենինական, Կիրովական, Ստեփանավան, Նոր-Բայազետ, Մարտունի, Բասարդեշար, Իջևան, Շամշադին (Բերդ), Զանգեզուր (Գորիս և Սիսիան), վորոնք ունենալով այդ կենտրոններում արհեստանոցներ և պահեստներ, միևնույն ժամանակ տալիս են գորգեր գործելու և իրենց շրջանի գյուղերում գտնվող արհեստանոցներին և տան մեջ աշխատող գորգագործներին: Այդ գյուղական բոլոր գորգագործական կետերի քանակն ընդհանուր առմամբ կազմում է 60-ից ավելի՝ 2500 գորգագործներով, վորոնց աշխատանքներն սպասարկում ու ղեկավարում են գորգմիավորման գասընթացներն ավարտած մոտ 80 մասնագետ հրահանգիչները:

Գորգմիավորման ցանցի մեջ են մտնում նաև 3 գորգագործական կետ, վորոնք գտնվում են Համամու, Ուզունլար և Կողբ գյուղերում, վոր 1934 թ. հանձնվել են տեղի կոլտնտեսություններին այն նկատառումով, վոր գորգագործների մեծամասնությունը լինելով կոլտնտեսությունների անդամներ, ավելի նպատակահարմար կերպով կողատարծվեն վերջինների կողմից, սակայն մեկ տարվա այդ փորձը ցույց ավելց, վոր կոլտնտեսություններն անկարող հանդիսացան աշխատանքները ուղիղ կերպով կազմակերպել ու պատշաճ ղեկավարութուն ցուցաբերել, նրան հետին տեղ դնելու հետեվանքով, և ավելի լավ կլիներ, վոր այդ 3 կետերը կրկին վերադարձվին գորգմիավորման ցանցի մեջ:

1935 թ. արտադրական պլանը կազմում է 12000 քառ. մետր գորգ, վորն իրագործելու համար անհրաժեշտ է մոտ 2500 գորգագործ: Չնայած վոր գորգագործների թիվը համեմատած 1932-33 թվականների հետ զգալի չափով պակասել է, սակայն շտորնիվ արհեստանոցների քանակի ավելացման բարձրանում է նաև միջին արտադրողականությունը, վորովհետև արհեստանոցներում գորգագործներն աշխատում են որեկան 8 ժամ, տարվա մեջ 11 ամիս շարունակ և միջին հաշվով գործում են 7-8 ք. մետր գորգ մինչդեռ տներում աշխատող գորգագործները, վորոնք դեռ կազմում են խոշոր մեծամասնություն, աշխատում են պատահական կերպով, այն է՝ տարվա մեջ վոչ ավել, քան 5-6 ամիս և միջին հաշվով արտադրում են 3-4 քառ. մետր գորգ:

Հայաստանում մեծ մասամբ գործվում են խիտ գործվածքի գորգեր՝ վորոնց մեկ քառ. մետրի մեջ լինում է 250-300 հազար հանգուլց (գործվածքը վորքան խիտ լինի, այնքան ավելի յերկար ժամանակ է պահանջվում և ավելի բարձր գնահատվում), իսկ գորգագործը 8 ժամվա ընթացքում կարող է կապել վոչ ավել, քան 5-6 հազար հանգուլց:

Նախապատերազմյան շրջանում Հայաստանի ամենախիտ գործվածքի գորգերը 75-80 հազար հանգուլցից ավել չեն ունեցել, իսկ մեծ մասամբ ունեցել են 50-60 հազար:

Համաձայն 2-րդ հնգամյակի պլանի նախատեսված էր, վոր Գորգմիավորումը 1935 թ. պետք է արտադրեր 20.000 ք. մ. գորգ, սակայն գյուղական կոլտնտեսությունների վերջին տարիներում ուժեղ գարգացման ու ընդհանրապես գյուղացիության սնտեսական դրության բարելավման հետևանքով այն գորգագործները, վորոնք մեծ մասամբ կոլտնտեսությունների անդամներ են, վորոշ շրջաններում, գլխավորապես տեխնիկական բույսերի մշակույթների շրջաններում այժմ առանձին կարիք չեն զգում գորգագործությամբ պարապելու, վորն այնքան յեկամուտ չի տալիս ինչքան գյուղատնտեսական աշխատանքը կոլտնտեսությունում: Ուստի այդ շրջաններում գորգ գործել ցանկացողների թիվը հետզհետե նվազում է: Հետևապես անհրաժեշտ է դառնում գորգագործությունը տարածել այն լեռնային շրջաններում, վորտեղ ձմեռն ավելի յերկարատե է և հացաբույսերի ու տեխնիկական բույսերի ինտենսիվ կուլտուրան ուժեղ չի զարգանում, և հնարավորություն կլինի կանանց ազատ բանվորական ուժը գործադրել գորգագործության նպատակին: Նկատի ունենալով այդ, անհրաժեշտ է գտ-

նում յուրաքանչյուր տարի պատրաստել մասնագետ հրահանգիչ-ներքի նոր կադրեր:

1934 թ. ընթացքում Հայաստանի գորգավորման գծով Յերեվանում կազմակերպված դասընթացներում, թե տեսականորեն և թե գործնականորեն պատրաստվել են 40 հոգի յոթնամյա և միջնակարգ կրթութուն ունեցող յերկու սեռից յերիտասարդ մասնագետ կադրեր, վորոնց մի մասը Հայաստանի զանազան շրջաններում ներկայումս ինքնուրույն ղեկավարում և գորգերի արտադրությունը: Այդ յերիտասարդ բովանկանաչափ կրթութուն ունեցող մասնագետներից (վորպիսիք նախկինում գորգագործ չեն յեղել), հավանական և գտնվեն այնպիսի մարդիկ, վորոնք խորաշնարով իրենց մասնագիտության մեջ, կարողանան ավելի յեվս կատարելագործություններ մտցնել գորգերի արտադրության բնագավառում ու իրենց հերթին պատրաստեն նոր կադրեր:

Ներկայումս չնայած, վոր ձեռքի գործված գորգերի պահանջը Յեվրոպական ու Ամերիկական շուկաներում չի թուլացել, սակայն, վորովհետև առաջարկը քանի գնում ավելանում և, ուստի գորգերի առևտրի բնագավառում մրցումն ավելի ու ավելի ուժեղանում և, վորի հետևանքով գորգերը վաճառվում են համեմատած առաջվա հետ ցածր գներով:

Վերջին տարիներում Չինաստանը, Հնդկաստանը, Պարսկաստանը, Թյուրքիան և այլ յերկրներն արտահանում են հանգին քանակությամբ գորգեր (տարեկան մոտ մեկ միլիոն քառ. մետր) և վաճառում են չափազանց ցածր գներով, շնորհիվ այդ յերկրներում գոյություն ունեցող բանվորների շահագործման: Այն ինչ Սորհրդային Միությունը չի կարող այդ միջոցին դիմել:

Սորհրդային Միությունում տարեկան արտադրվում և մոտ 150 հազար քառ. մետր գորգ, վորից բարձր վորակ կազմում են վոչ ավել, քան 50 տոկոս, և վորոնք արտասահմանյան շուկաներում հաջող վաճառվում են:

Հայաստանում բարձրորակ գորգերը կազմում են 60 տոկոս և արտակարգ վորակի՝ 10 տոկոս, իսկ մնացածները լինում են միջակ վորակի:

Վորպեսզի բոլոր արտադրված գորգերը հաջող կերպով վաճառվեն, անհրաժեշտ և ավելի ու ավելի բարձրացնել գորգերի վորակը և գլխավորապես նրանց զեղարվեստական կողմը, վորը գորգի արժեքավորման համար գերակշռող նշանակություն ունի:

Ինչպես Գորգավորումը, նույնպես և Միության մյուս հան-

րապետությունների գորգագործական կազմակերպությունները, իրենց արտադրած բոլոր գորգերը հանձնում են Պետառին (Գոստորգ), վորը լինելով Անդրկովկասում միջնորդ Միութենական տնայնագործական ապրանքների արտահանման կազմակերպության «Կովյորկուստեկապորտ»-ի միջնորդ լիազորը, Արտաքին Առևտրի Ժողկոմատի մի ճյուղն և և փաստորեն իրագործում և գորգերի վաճառքն արտասահմանում:

«Կովյորկուստեկապորտ»-ը նաև ներմուծում և արտասահմանից գորգագործության համար ներկերը՝ ինդիգո (լեղակ) յեվ կաշենիլ (վորդան կարմիր), վորոնք Սորհրդային Միությունում չկան:

Նմանապես նա մատակարարում և նաև գորգերի նկարներ, վորոնք պատրաստվում են Թիֆլիսում Անդրպետառի նկարչական արհեստանոցում: Գորգագործության համար անհրաժեշտ քանակի բուրդ, բամբակյա թել, տորքերի համար փայտանյութ, յերկաթ և թեղերի ներկելու համար զանազան քիմիական նյութեր ստացվում են պլանային կարգով Համամիութենական Արհեստագործական Կոպերացիայի Սորհրդի—Վսեկոպրոմսովետի միջոցով:

Բուսական ներկեր, ինչպես կարմիր գույնի համար տորոն, դեղին գույնի համար դեղնածաղիկ և սրճագույնի համար ընկույզի կեղեվ Գորգավորումը մթերում և Հայաստանում, սրանցից տորոն—տարեկան մոտ 15000 կիլոգրամ, պահանջի միայն մի յերբորդ մասը մթերվում և Հայաստանում, իսկ մնացածը ձեռք և բերվում Ադրբեջանի և Դաղստանի հանրապետություններում:

Հին ժամանակներում նախկին Հայաստանի գորգագործները կարմիր գույնի համար, բացի տորոնից խոշոր չափով գործածելիս են յեղել նաև վորդան կարմիր հայտնի ներկը, վորն ստացվում և մի տեսակ փոքր միջատից (վողդ), վորն ապրում ու բազմանում և միայն հատուկ թփերի վրա, վոր հնեբում Հայաստանում բավականին տարածված և յեղել, սակայն այժմ գրեթե բոլորովին անհետացել և: Ներկայումս այդ ներկը (կաշենիլ) ստացվում և միայն Ամերիկայից կամ Իսպանիայից:

### ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՇԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Գորգագործ կոլտնտեսուհիները ձմեռային ամիսներին և ընդհանրապես տարվա ընթացքում նրանք, վորոնք իմանում գորգ գործելը, սովոր չեն առանց աշխատանքի մնալ, անկաս-

կամ այնքան ազատ ժամանակ կունենան, վորպեսզի գործեն 1—2 գորգ թե իրենց սեփական կարիքները և թե կորսնասու-  
թյան կամ վաճառքի համար: Անհրաժեշտ և կազմակերպել  
այգպիսիներին այնպես, վոր գորգագործությունը կորսնասու-  
թյունների աճման հետ նույնպես շարունակի իր գոյությունը,  
և դրան պետք է ամեն կերպ նպաստեն կորսնասու-  
թյունները, նույնիսկ ձեռք առնեն միջոցներ, վորպես-  
զի այդ գեղեցիկ և արժեքավոր արտադրությունն իրենց մոտ  
ավելի ևս զարգանա:

Գորգագործությունը յեթե լավ հիմքերի վրա դրված լինի  
և արտադրվեն բարձրորակ գորգեր, կարող է ավելի արդյունա-  
վետ լինել քան վորևե այլ արհեստ: Բացի այդ կորսնասու-  
թյան վարչությունը պետք է ուշագրություն դարձնի,  
վորպեսզի յուր քան չյուր յերիտասարդ կուրսըն-  
տեսունհի, վորը չի իմանում գորգ գործել, անպայման սովորի  
այդ արհեստը և ձմեռվա ամիսներին զբաղվի դրանով:

Յեվ յեթե կորսնասու-թյունները կարողանան գորգերի  
արտադրությունը կազմակերպել նպատակահարմար կերպով և  
շահագրգռեն գորգագործներին բավարար աշխտորով, կարող կլի-  
նեն լավագույն գորգերի մի մասը հատկացնել պետությանը  
եքսպորտի համար: Պետք է հիշել, վոր լավ վորակի գեղեցիկ  
գորգը վորքան էլ ինքնարժեքով բարձր լինի, նա ավելի շահավետ  
կդառնա, քան ցածր ինքնարժեքով միջակ վորակի գորգը:

Յեթե գորգերի արտադրությունը դաշտային շրջաններում  
վորոշ չափով պակասի՝ սակայն լեռնային շրջաններում, ինչպես  
Լենինականի, Կիրովականի, Դիլիջանի մի քանի մասերում,  
նմանապես Նոր-Բայազետի, Մարտունու, Բասարգեշարի, Ախ-  
տայի և Աբարանի, վորտեղ ձմեռն ավելի յերկարատև է և  
մինչև այժմ այդ շրջաններում Գորգմիավորումը հնարավորու-  
թյուն չի ունեցել ծավալելու իր աշխատանքները, այդ վայրե-  
րում գորգագործությունը կարող է լայն ծավալ ստանալ:

Միայն 1934 թ. սկսած Գորգմիավորումը փորձ արեց կազ-  
մակերպել գորգերի արտադրությունը Նոր-Բայազետում, Մար-  
տունում և Բասարգեշարում ու չնայած տեղի բնակիչները  
բոլորովին չէին իմանում գորգ գործել, սակայն շնորհիվ արհես-  
տանոցների համար ձեռք բերած համապատասխան շենքերի, կարճ  
ժամանակվա ընթացքում այդ 3 կետում Գորգմիավորման մասնա-  
գետների միջոցով պատրաստվեցին մոտ 300 գորգագործ, մեծ մա-

սամբ յերիտասարդ աղջիկներից, վորոնք հենց սկզբից վարժվեցին  
արտադրել վորակավոր գորգեր: Յեվ յեթե այդ շրջանների  
գյուղերում ևս գտնվեն հարմար շենքեր արհեստանոցների համար,  
հավանական է, վոր գորգագործների թիվը մի քանի հազարի  
հասնի և դա իրագործելի կլինի, յեթե յուրաքանչյուր գյուղի  
կորսնասու-թյուն կամ գյուղխորհուրդ գիտակցի գորգագործու-  
թյան կարևոր նշանակութունն ու հատկացնի գորգագործու-  
թյան արհեստանոցի համար համապատասխան շենք:

Նույնպիսի հաջողությամբ անկասկած գորգագործությունը  
կարելի յե կազմակերպել Հայաստանի մյուս լեռնային շրջան-  
ներում:

Բացի գյուղական գորգագործներից, քիչ չեն լինի գորգ  
գործել սովորելու ցանկացողները նաև քաղաքներում, վորովհետև  
այժմ գորգ գործելու արհեստն այնքան հեշտացել է, վոր յերբ  
Գորգմավորման կողմից տրամադրվում է անհրաժեշտ գործիք-  
ներ—պատրաստի ներկված թելեր և նկար, գործել սովորելու  
համար 10—15 օրից ավելի ժամանակ չի պահանջում:

Գորգագործությունն իբրև գեղարվեստական աշխատանք,  
անհամեմատ ավելի բարձր է և հետաքրքիր, քան վորևե ձեռա-  
գործ, վորով կանայք զբաղվում են տներում ազատ ժամանակ,  
և ինչու ամեն տան մեջ չի կարելի գործել տարվա ընթացքում  
թեկուզ մեկ կամ յերկու փոքր գորգ:

Պետք է նշել նաև այն, վոր ինչքան գորգ գործողը գիտա-  
կից և կուլտուրական է, այնքան բարձր վորակի գորգ է ար-  
տադրում, իսկ ինչպես գիտենք լավ վորակի գորգը միշտ գնա-  
հատվում է ավելի բարձր և տալիս է ավելի վարձատրություն:

Գորգագործական տորքը պետք է լինի իբրև զարդ յուրաքան-  
չյուր տան մեջ—ինչպես օրինակ՝ Բելգիայում և Շվեյցարիայում  
համարյա բոլոր տներում կարելի յե պատահել ասեղնագործու-  
թյան գործիքի, իսկ Շոտլանդիայում (Անգլիա) ջուլհակության  
տորքը, նմանապես Միության հյուսիսային շրջաններում, վոր-  
տեղ միլիոնավոր կանայք զբաղված են տան մեջ հաշիաների  
հյուսվածքով, վորը հայտնի յե «Ռուսական կրոժեվա» անու-  
նով և վաճառվում է թե արտասահմանում և թե ներքին շու-  
կաներում:

Այգպիսով յեթե գորգագործությունը տարածվի Հայաստա-  
նի բոլոր շրջաններում, կասկածից դուրս է, վոր յուրաքան-  
չյուր տարի աշխատող գորգագործների թիվն աստիճանաբար

կրարձրանաւ և սխալված չենք լինի, յեթե ասենք, վոր մի քանի տարուց հետո նրանց թիվը կհասնի տաս հազարից ավելի ու գորգեր կարտադրվեն մի քանի տասնյակ հազար քառ. մետր:

Այստեղ կարող ե հարց ծագել, արդյոք Հայաստանում գորգագործութեանը կարելի կլինի տրամադրել այդքան բուրդ և հնարավոր ե արդյոք այդպիսի խոշոր քանակի գորգեր իրացնել—վաճառել:

Բրդի խնդիրը, վորը հիմնական հումութն ե կազմում գորգագործութեան համար, այսուհետե կարող ե լուծվել բարեհաջող կերպով, չնայած, վոր ներկայումս բուրդը համարվում ե դիֆիցիտային ապրանք և բաց ե թողնվում պլանային կարգով, սակայն դա կրում ե ժամանակավոր բնույթ և կախված ե վոչխարաբուծութեան զարգացումից: Ինչպես հայտնի յե՛ վոչխարներին թիվը վերջին տարիներում կուլակային տարբերի ֆլասարաբուծեան հետևանքով, ինչպես Խորհրդային Միութեան մյուս հանրապետութեաններում, նույնպես և Հայաստանում պակասել ե:

Համաձայն Հայպետառի տվյալների 1925 թ. վոչխարների և այծերի թիվն Հայաստանում յեղել ե 1.160 հազար, իսկ 1933 թվին մոտ 600 հազար, սակայն 1934 թ. արդեն սկսում ե աճը և այդ թվի վերջերին հաշվվում ե 700 հազարից ավելի, վոր տալիս ե աճ 17 տոկոս: Պետք ե յենթադրել, վոր անասնապահութեան զարգացման վերաբերյալ, պետութեան կողմից ձեռք առած հատուկ միջոցառումների շնորհիվ, վոչխարների քանակը տարեց տարի պետք ե ավելանա:

Ավելորդ չի լինի այստեղ ասել, վոր Հայաստանում պետք ե ուշադրութեան դարձվի կիսակոշտ, գլխավորապես սպիտակ բուրդ տվող վոչխարների բազմացմանը՝ բալբաս, մակու, թուշի ե դոնմա ցեղերի զարգացման վրա:

Ինչ վերաբերում ե այն խնդրին, թե կարելի յե արդյոք արտադրած գորգերն իրացնել դրսի և ներսի շուկաներում, պետք ե ասել, վոր յեթե նկատի առնենք այն, վոր Խորհրդային Միութեան բոլոր հանրապետութեաններում գորգերի արտադրութեանը մի քանի տարուց հետո կկրկնապատկվի կամ կյեռապատկվի, այնուամենայնիվ հարկավոր ե մի քանի տասնյակ տարիներ, վորպեսզի բավարարվի Միութեանական ներքին շուկայի այն խոշոր պահանջը, վոր ներկայումս կա և պետք ե համոզված լինել, վոր այդ պահանջը հետզհետե ավելի ու ավելի կուճե:

դասա կապված մեր աշխատավորութեան տնտեսական դրութեան ընդհանուր վերելքի հետ, նկատի չուենալով, մինչդեռ գորգերի եքսպորտը, վորը նույնպես չի դադարել գոյութեան ունենալուց:

Միտժամանակ կասկած չի կարող լինել, վոր լավագոյն գորգերի զգալի մասը կշարունակվեն արտահանվել, վորովհետե արտասահմանյան շուկաները միշտ պահանջ են զգացել և կզգան Խորհրդային Միութեանում, գորգերի նկատմամբ, իսկ ներկայումս առանձնապես այդ պահանջն ուժեղ ե Հայաստանում գործված գորգերի վերաբերյալ:


Հետևապես այդ բոլորը գալիս ե ասելու, վոր ձեռքի գործված գորգերի արտադրութեանը դեռ շատ տարիներ կշարունակվի:

Մրանից մի քանի տարի առաջ, յերբ սկսեցին արտադրվել Ֆարերիկային գորգեր, շատերն այն կարծիքի եյին, վոր տնայնագործական գորգերի արտադրութեանն այլևս գոյութեան չի կարող ունենալ, սակայն ընդհակառակը, գորգերի այդ արտադրութեանը քանի գնում ե ավելի ևս ծավալվում ե, ուստի մեզանից ե կախված, վորպեսզի այդ գեղեցիկ և արժեքավոր արհեստը Խորհրդային Հայաստանում ավելի ևս կատարելագործենք և պատշաճ հիմքերի վրա դնենք:

Այժմ դա ավելի հեշտութեամբ հնարավոր ե, քանի վոր ունենք բավական թվով պատրաստված յերիտասարդ մասնագետ—հրահանգիչ կադրեր:



«Ազգային գրադարան



NL0290675

27.164